ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչության միջազգային պայմանագրերի փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Անուշ Ռշտունու և ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Մնացական Շահգալդյանի՝ Բելառուսի Հանրապետություն (Մինսկ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Անուշ Ռշտունի, Մնացական Շահգալդյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչության միջազգային պայմանագրերի փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ և ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Բելառուսի Հանրապետություն (Մինսկ), 2019 թվականի դեկտեմբերի 2-ից 4-ը:

Հրավիրող կողմը՝ ԱՊՀ գործադիր կոմիտե:

Գործուղման նպատակը՝ «Կոռուպցիայի հակազդմանն ուղղված Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրի նախագծի լրամշակման և փոխհամաձայնեցման նպատակով ԱՊՀ գործադիր կոմիտեում կայանալիք փորձագիտական խմբի լրացուցիչ նիստին մասնակցություն:

Քննարկված թեմաները՝ «Կոռուպցիայի հակազդմանն ուղղված Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրի նախագծի առնչությամբ Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության դիտողություններն ու առաջարկությունները:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝ ՀՀ արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության

վարչության միջազգային պայմանագրերի փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Անուշ Ռշտունին և ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Մնացական Շահգալդյանը մասնակցել են «Կոռուպցիայի հակազդմանն ուղղված Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրի նախագծի լրամշակման և փոխհամաձայնեցման նպատակով ԱՊՀ գործադիր կոմիտեում սույն թվականի դեկտեմբերի 2-ից 4-ը կայացած փորձագիտական խմբի լրացուցիչ հանդիպմանը, որի ժամանակ քննարկվել են «Կոռուպցիայի հակազդմանն ուղղված Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրի նախագծի առնչությամբ Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության դիտողություններն ու առաջարկությունները:

Որպես Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի ներկայացուցիչ ՀՀ արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչության միջազգային պայմանագրերի փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Անուշ Ռշտունին ներկայացրել է Համաձայնագրի նախագծի խնդրահարույց դրույթների վերաբերյալ հայկական կողմի ընդհանուր դիրքորոշումը, տեղեկություններ է հայտնել ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված ներկա իրավիճակի և հետագա ծրագրերի վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Մնացական Շահգալդյանը ներկայացրել է ՀՀ գլխավոր դատախազության դիրքորոշումը Համաձայնագրի մի շարք դրույթների հետ կապված և տեղեկություններ ներկայացրել ՀՀ-ում կոռուպցիոն բնույթի բացահայտված հանցագործությունների վերաբերյալ:

Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Հանդիպման արդյունքում վերջնականապես փոխհամաձայնեցվել է Համաձայնագրի նախագծի տեքստը և կազմվել է ԱՊՀ ղեկավարների խորհրդի վերոնշյալ Համաձայնագիրը ստորագրելու մասին արձանագրության նախագիծ:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ ՀՀ արդարադատության նախարարությունը հանդես կգա վերոնշյալ Համաձայնագրի ստորագրման և վավերացման, իսկ դրա ուժի մեջ մտնելուց հետո նաև Համաձայնագրի կատարման ընթացակարգային փուլերում որպես իրավասու մարմին, տեղեկություններ կհաղորդի ԱՊՀ գործադիր կոմիտե վերջինիս կատարումն ապահովելու ժամկետների, պատասխանատու մարմինների և կատարված աշխատանքների արդյունքների վերաբերյալ:

Հարգանքով,

ՀՀ արդարադատության նախարարության
միջազգային իրավական համագործակցության
վարչության միջազգային
պայմանագրերի փորձաքննության բաժնի
գլխավոր մասնագետ՝

Անուշ Ռշտունի

10 դեկտեմբերի 2019